

ուեցան Պաղեսիներն. Պարսիկները Հերակլի հետ խաղաղութեան դաշինք կը կնքեն ու գերի տարուած խաչը կը վերադարձնեն Երուսաղէմ: Մոսեսոս՝ Թեոդոսի վանքին մեծաւորը՝ քանդուած քաղաքին սրբավայրերը կը նորոգէ օգնութեամբ Տիբերիոյ, Տիրոսի, Գամասկոսի եւ Աղեփանդիոյ քրիստոնէից. նոյն իսկ ամենափոքր մասուռներն անգամ կը նորոգուին, ինչպէս յայտնի կ'ըլլայ Ը. դարու վրացական ծիարանէն: Նիւրապէս միջոցներու անբաւականութեան պատճառաւ կարելի չըլլալով այս վերաշինութեան առթիւ գործադրել սրբավայրերու նախնական յասակագիծը, անոնցմէ շատերը առժամանակեայ շինուած են լաւագոյն ժամանակներու մէջ լրացնելու համար անոնց ամբողջացումը: 633ին Սոփրոնիոս յաջորդելով Մոսեսոսի՝ շարունակեց անոր վերանորոգութեան գործը: Արաբական արշաւանքէն յետոյ, ըստ Կոստանդին Պորփիրոսի, Մեծն Կարալոս «Մեծ գումարներ ղրկեց Պաղեսիս, ուր շինել տուաւ բազմաթիւ վանքեր»: 810ին Aix-la-Chapelleի մէջ գրքնուած արձանագրութիւն մը կը յիշէ այն աղբիւրները՝ որոնցմով պիտի նորոգուէին Ս. Երկրի եկեղեցիները: Commemoratorium de Casis Deiի մէջ կը գտնուի Երուսաղէմի պատրիարքութեան կրօնական շինուածքներուն եւ անոնց անձերուն մէկ ցուցակագրութիւնը, ինչպէս նաեւ յասկացուած ծախսոց ցուցակ մը, զոր կայսրը կ'ստանար իր կողմէն ղրկուած պատուիրակին ձեռքով. անա այս ցուցակներէն կը հասկցուի Թ. դարուն Ս. Երկրի սրբավայրերուն եւ կղերին կացութիւնը:

Գ

Հ Ա Յ Կ Ա Ն Ն Վ Ա Ն Կ Ե Ը

Յ Բ Ո Ւ Ս Ա Ղ Է Մ Ի Ե Ի Շ Բ Ջ Ա Կ Ս Յ Ի Յ Մ Է Ջ

Մենք այս աշխատութեան մէջ յիշած ենք քէ Հայր Գ. դարէն սկսեալ ուխտաւորութեան պատճառներով կը յանախէին Երուսաղէմ. այդ պարագան փաստելու պիտի չկայ: Հայր շատ կանուխէն քրիստոնէութիւնը ընդունած ըլլալով՝ յաջողած էին Երուսաղէմի Տնօրինական Ս. Տեղեաց մէջ տիրանալ որոշ իրաւունքներու, եւ իբր